

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԲՏԱՆ-ՀՄԱԾՁԲ-2026/03**

« 06 » 08 2026 թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը ի դեմս գլխավոր քարտուղար Դ. Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Վիվա Արմենիա» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Ա. Ավետիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Միջգերատեսչական ցանցի և համացանցի ապահովման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 62 907 198 (վաթսուներկու միլիոն ինը հարյուր յոթ հազար հարյուր ինսուսուրթ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N.1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով սրանձնած պարտավորությունների ողջ ծավալով կապարտումը և պայմանները փարածվում են 01.07.2026թ. կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկներ կայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի գիջում՝ պահանջի գիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը գիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա

պահանջի գիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ
ՀՀ բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարություն
Ք. Երևան, Վ. Սարգսյան 3/3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02565518
Հ/Հ 900011039469

Գլխավոր քարտուղար՝
Դ. Գասպարյան
(ստորագրություն)


Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
«ՎԻՎԱ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ
Ք. Երևան, Արգիշտի փողոց 4/1
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 01551651
Հ/Հ 1930030289444300

Գլխավոր տնօրեն՝
Ա. Ավետիսյան *AL*
(ստորագրություն)


ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	72721100/2	Կցվում է**	դրամ	62 907 198	1	ՀՀ տարածք	Մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը

* Ծառայությունների մատուցման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ծառայությունները մատուցել ավելի կարճ ժամկետով:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Միջգերատեսչական ցանցի և համացանցի ապահովման ծառայությունների

1. Միջգերատեսչական ցանցի ապահովման ծառայություններ

N	Անվանում	Նկարագրություն
1.	Առանձնացված կապուղի	Առանձնացված օպտիկամանրաթելային կապուղիների (dark fiber) ապահովում (առնվազն 4 թելերի միացումով՝ յուրաքանչյուր զույգը տարբեր ճանապարհով) հիմնական հանգույցից (ՀՀ վարչապետի աշխատակազմ, կառավարական տուն 1) դեպի պահուստային հանգույց (Դավիթաշեն 4-րդ թ., Ա. Միկոյան 109/8), և պահուստային հանգույցից (Դավիթաշեն 4-րդ թ., Ա. Միկոյան 109/8) դեպի Տիգրան Մեծ 4, «ԷԿԵՆԳ» ՓԲԸ հանգույց՝ կապուղու ծայրակետերում ապահովել հասանելիություն SFP+ տեսակի պորտով: Վերոնշյալ կապուղին պետք է անցկացվի ստորգետնյա ճանապարհներով:
2.	Պայմաններ	Հավելվածի յուրաքանչյուր կետերում ապահովել համապատասխան թողունակությամբ երաշխավորված, երկկողմանի (սիմետրիկ) տվյալների փոխանցման ծառայություն, հետագայում արագությունների փոփոխության հնարավորությամբ: Կարգավորումները նախապես պետք է համաձայնեցնել պատվիրատուի հետ: Հավելվածի 8-13 կետերում միացումները ապահովել ստորգետնյա ճանապարհներով: Անհրաժեշտ սարքավորումների տեղադրում: • “Latency” ոչ ավել քան 5 ms • Ապահովել ցանցային ուղղորդում բազմաթիվ պահուստային ճանապարհներով և վերականգնման ունակությամբ (“routing with multiple redundancy paths and resiliency”) • Տեխնիկապես ապահովել ցանկացած կետում օգտագործվող ծառայությունների (իեռախոսակապ, ներքին ցանց, առանձնացված

		սերվերներ և այլն) բաժանումը տարբեր Layer 2 ենթացանցների (VLAN) • Տարբեր կետերի խմբավորումը ըստ ծառայությունների Layer 2 ենթացանցների (VLAN) • Ապահովել համակցում վերոնշյալ Layer 2 խմբերի միջև • Անհրաժեշտության դեպքում յուրաքանչյուր կետում ապահովել անհրաժեշտ քանակի ցանկացած "VLAN ID"-ի օգտագործման հնարավորությունը • Traffic shaping per VLAN/ ցանկացած VLAN-ի վրա արագության կարգավորում • Ապահովել "QinQ, STP, Ethernet over MPLS" օգտագործման հնարավորությունը ցանկացած կետում
3.	Որակի պահանջներ	Հավելվածի ցանկ 1-3-ի որևէ կետում կապը չպետք է խափանվի տարեկան ոչ ավելի, քան 4 անգամ: Սույն դրույթի իմաստով խափանում է համարվում կապի բացակայությունը՝ յուրաքանչյուր խափանման դեպքում 60 րոպեից ավելի ժամկետով: Հավելվածի ցանկ 4-ի որևէ կետում կապը չպետք է խափանվի տարեկան ոչ ավելի, քան 6 անգամ: Սույն դրույթի իմաստով խափանում է համարվում կապի բացակայությունը՝ յուրաքանչյուր խափանման դեպքում 120 րոպեից ավելի ժամկետով Մեկ ամսվա ընթացքում հավելվածի ցանկ 1-3 -ի որևէ կետում չպետք խափանվի (բացակայի) ոչ ավելի, քան 120 րոպե ժամանակով, իսկ ցանկի 4-ի որևէ կետում՝ 240 րոպե ժամանակով: Սույն դրույթի իմաստով կապի խափանման (բացակայության) ժամանակը հաշվարկվում է որպես մեկ ամսվա ընթացքում կորստաբեր ժամանակի տվյալ կետում կապի բոլոր խափանումների (բացակայությունների) ժամկետների հանրագումար:
4.	Այլ պահանջներ	Օգտագործված ծավալների վերաբերյալ տեղեկատվության ստացում Կապի առկայության, որակի և մատուցման ծառայության ծավալի «on-line» վերահսկման հնարավորություն

Անհրաժեշտության դեպքում պատվիրատուն կարող է պահանջել մատակարարից մինչև 30 կետի ավելացում և 50 կետի տեղափոխում՝ մարզերի դեպքում (մինչև 3 կմ մատակարարի մոտակա տեխնիկական հանգույցից): Պատվիրատուն կարող է պահանջել մատակարարից գումարային թողունակության մինչև 1 Gb/s ավելացում ինչպես նաև թողունակության վերաբաշխում կետերի միջև:

Սպասարկել պատվիրատուի կողմից տրամադրված ստորգետնյա ֆիզիկապես առանձնացված օպտիկամանրաթելային կապուղի (dark fiber), հիմնական հանգույցից դեպի Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, համապատասխան սարքավորումներով (տես աղյուսակ 2), ապահովելով խափանակայունությունը՝ յուրաքանչյուր կետում միացնելով համապատասխան քանակի թելեր (առնվազն 2):

Կառավարական տուն 3 (Աղյուսակ 1) կետերի սերվերային հանգույցներում ապահովել օպտիկամանրաթելային կապուղիներ (բաղկացած առնվազն 4 թելից) համապատասխան սարքավորումներով (տես աղյուսակ 2):

Սպասարկել պատվիրատուի կողմից տրամադրված ստորգետնյա ֆիզիկապես առանձնացված օպտիկամանրաթելային կապուղի (dark fiber), բաղկացած առնվազն 4 թելից ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/8 և ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող., 5 շենքերի միջև՝ համապատասխան սարքավորումներով ապահովելով խափանակայունությունը (տես աղյուսակ 2)՝ յուրաքանչյուր կետում միացնելով համապատասխան քանակի թելեր (առնվազն 2):

Ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/8 կետերի սերվերային հանգույցներում ապահովել օպտիկամանրաթելային կապուղիներ (բաղկացած առնվազն 4 թելից) համապատասխան սարքավորումներով (տես աղյուսակ 2):

Աղյուսակ 1

Հ/հ	Գերատեսչություն	Մարզ	Բնակավայր	Հասցե
1.	ՀՀ Վարչապետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներ	Երևան	ք.Երևան	Կառավարական տուն N 3
2.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն			
3.	ՀՀ առողջապահության նախարարություն			
4.	Քաղաքաշինության պետական կոմիտե			
5.	Վիճակագրական կոմիտե			
6.	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն			
7.	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն			
8.	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն			
9.	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն			

Աղյուսակ 2

Անվանում	Տեխնիկական պարամետրեր	Քանակ
L2 optical switch	Min 2 x sfp+ uplink ports Min 8 x 1gb/s sfp ports	4
L2 switch	Min 2 x sfp 1gb/s uplink port Min 8 x 1gb/s ports	11
SFP module	Sfp transceivers (SM, 1Gb/s, 10 km)	10
SFP module	Sfp transceivers (SM, 1Gb/s, 1 km)	40

2. Համացանցի ապահովման ծառայություններ

ՀՀ վարչապետի աշխատակազմ		
N	Անվանում	Նկարագրությունը
1.	Համացանց	Հիմնական պահուստային և ԷԿԵՆԳ ՓԲԸ հանգույցներում համացանցի (հիմնական և ռեզերվային) ապահովում 2 իրարից անկախ մատակարարներից ^{*1,2} , յուրաքանչյուրն իր առանձնացված օպտիկամանրաթելային մալուխով՝ BGP արձանագրության կիրառումով:
2.	Պայմաններ	Երաշխավորված, երկկողմանի (սիմետրիկ) համացանցի ապահովում առնվազն 3 Gb/s գումարային թողունակությամբ (բոլոր 3 հանգույցները իրար հետ) և միաժամանակ առնվազն 1 Gb/s թողունակությամբ (բոլոր 3 հանգույցները իրար հետ) ՀՀ տարածքում: Անհրաժեշտ սարքավորումների տեղադրում և սպասարկում:
3.	Որակի պահանջներ	Համացանցը հիմնական հանգույցում չպետք է խափանվի (բացակայի) տարեկան ոչ ավելի, քան 4 անգամ: Սույն դրույթի իմաստով խափանում է համարվում համացանցի բացակայությունը՝ յուրաքանչյուր խափանման դեպքում 60 րոպեից ավելի ժամկետով: Մեկ ամսվա ընթացքում համացանցը չպետք է խափանվի (բացակայի) ոչ ավելի քան 90 րոպե ժամանակով: Սույն դրույթի իմաստով համացանցի խափանումների (բացակայությունների) ժամանակը հաշվարկվում է որպես մեկ ամսվա ընթացքում բոլոր խափանումների (բացակայությունների) ժամկետների հանրագումար:
4.	Այլ պահանջներ	Օգտագործված ծավալների վերաբերյալ տեղեկատվության ստացում Համացանցի տրամադրման որակի և օգտագործվող ծավալի «on-line» վերահսկման հնարավորություն • «The Reseaux Europeens Network Coordination Centre (RIPE NCC)» կազմակերպությունում ՀՀ վարչապետի աշխատակազմի անվամբ գրանցված «/23IP» հասցեների սպասարկում

		• Շարժական ինտերնետ, Wi-Fi միացում (STA կառավարում), մինչև 32 սարք միացնելու հնարավորություն (802.11b/g/n), LTE FDD' DL 150 Մբ/վ, UL 50 Մբ/ - 25 հատ • Շարժական ինտերնետ LTE FDD' DL 150 Մբ/վ, UL 50 Մբ/ - 22 հատ (Ցանկ 5)
--	--	---

* 1. Տրամադրվող կապուղիները ՀՀ տարածքում և ՀՀ տարածքից դուրս պետք է լինեն ֆիզիկապես առանձին

2. ՀՀ տարածքից դուրս համացանցի ապահովումը պետք է լինի տարանջատված մայրուղիներով և սպասարկող մատակարարները նույնպես պետք է լինեն իրարից անկախ:

Որևէ կետում կապի խափանման դեպքում Կատարողի ցանցային մասնագետները տեխնիկական քննությամբ նախատեսված ժամկետներում վերացնում են խափանումները և դրանց պատճառների մասին տեղեկացնում Պատվիրատուին: Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից լիազորված ցանցային մասնագետների հեռախոսահամարներն ու էլեկտրոնային փոստի հասցեները: Պատվիրատուի կողմից լիազորված ներկայացուցիչները, խափանումները արձանագրելու դեպքում, իրավունք ունեն դիմել Կատարողի համապատասխան ցանցային մասնագետներին՝ պահանջելով վերացնել խափանումները:

Երևան քաղաքի պետական մարմիններ
Ցանկ 1.

Հ/Հ	Պետական մարմին	Ստորաբաժանում	Մարզ	Բնակավայր	Հասցե	Տվյալների հաղորդման թողունակություն	Հ/Մ
1.	ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ	Հիմնական հանգույց	Երևան	ք. Երևան	Կառավարական տուն Ա 1	3x1	Gb/s
2.	ՀՀ Կառավարություն		Երևան	ք. Երևան	Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3	1	Gb/s
3.	Պահուստային հանգույց		Երևան	ք. Երևան	Դավթաշեն 4-րդ թաղամաս, Միկոյան 109/8	1	Gb/s
4.	ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ		Երևան	ք. Երևան	Բաղրամյան 26/1	200	Mb/s
5.	ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ		Երևան	ք. Երևան	Ա. Մկրտչյան 5	500	Mb/s
6.	ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Էկոնոմիկա	Երևան	ք. Երևան	Ա. Մկրտչյան 5 բ	20	Mb/s
7.	ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ		Երևան	ք. Երևան	Դավթաշեն 4-րդ թաղամաս, Միկոյան 109/8	200	Mb/s
8.	ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ		Երևան	ք. Երևան	Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2	100	Mb/s
9.	ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ		Երևան	ք. Երևան	Բազրկանդի 5	100	Mb/s

10.	ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Միասնական սոցիալական ծառայություն (ԱՍՀՆ ՆՈՐՔ ՍԾՍԻԿ հիմնադրամ, ՋՊԳ 4060 4066)	Երևան	ք. Երևան	Ուլենցի 68	200	Mb/s
11.	ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Միասնական սոցիալական ծառայություն (GIP 1059)	Երևան	ք. Երևան	Ուլենցի 68	100	Mb/s
12.	ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	«Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն հիմնադրամ, Զբաղվածության պետական գործակալություն (1057)	Երևան	ք. Երևան	Ուլենցի 68	600	Mb/s
13.	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ	ՏՏԵ վարչություն	Երևան	ք. Երևան	Ահարոնյան 12/3	500	Mb/s
14.	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ	Արարտյան մաքսատուն	Երևան	ք. Երևան	Իսակովի 10	50	Mb/s
15.	ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Անձնագրային և վիզաների վարչություն	Երևան	ք. Երևան	Դավթաշեն 4-րդ թաղամաս. 2. 17/10	100	Mb/s

16.	ՀՀ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ	Կարաստրի Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն	Երևան	ք. Երևան	Կոմիտաս 35/2	500	Mb/s
17.	ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ		Երևան	ք. Երևան	Բաղրամյան 10	100	Mb/s
18.	ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ		Երևան	ք. Երևան	Արգիշտի 1	300	Mb/s
19.	ՀՀ ՔՆՆՁԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ		Երևան	ք. Երևան	ք. Երևան, Մամիկոնյանց 46/5	100	Mb/s
20.	ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒԹՅՈՒՆ ԿՈՄԻՏԵ		Երևան	ք. Երևան	Վաղարշյան 13ա	100	Mb/s
21.	ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ		Երևան	ք. Երևան	Մելիք Արամյան 1	100	Mb/s
22.	ՀՀ կառավարություն		Երևան	ք. Երևան	Վ. Սարգսյան 3/8	1	Gb/s
23.	ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	ՀՀ արդարադատության և նախարարության փաստաթղթաշրջան առության ապահովման վարչության արխիվային բաժին	Երևան	ք. Երևան	Դավիթաշեն 2-րդ թաղամաս, 16/3	20	Mb/s
24.	ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Ռազմարդյունաբերո ւթյան կոմիտե	Երևան	ք. Երևան	Հակոբ Հակոբյան 3	100	Mb/s
25.	ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ		Երևան	ք. Երևան	Վ. Սարգսյան 3/3	100	Mb/s

26.	ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ		Երևան	ք.Երևան	Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2	100	Mb/s
27.	ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ		Երևան	ք.Երևան	Վ. Սարգսյան 3/8	100	Mb/s
28.	ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	ՀՀ քննադատականության նախարարության անտառային կոմիտե	Երևան	ք.Երևան	Ա. Արմենակյան 129	100	Mb/s
29.	ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ		Երևան	ք.Երևան	Բաղրամյան 19	100	Mb/s
30.	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ		Երևան	ք.Երևան	Գ. Նժդեհի փողոցի հ.20	20	Mb/s
31.	ՀՀ Սկյութի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակ		Երևան	ք.Երևան	Հանրապետության 37	20	Mb/s
32.	ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒԹՅՈՒՆ ԿՈՄԻՏԵ		Երևան	ք.Երևան	Մոսկովյան 1	500	Mb/s
33.	ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՇՏՊԵՆ		Երևան	ք.Երևան	Պուշկին 56 ա	20	Mb/s
34.	«ԷԿՆԵԳ» ՓԲԸ		Երևան	ք.Երևան	Գ. Հովսեփյան 24/1	100	Mb/s
35.	ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ		Երևան	ք.Երևան	Ալեք Մանուկյան 9	100	Mb/s
36.	ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒԹՅՈՒՆ ԿՈՄԻՏԵ		Երևան	ք.Երևան	Այգեձոր 67	100	Mb/s

37.	ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ	Երևան	ք. Երևան	Անտառային 188	60	Mb/s
38.	ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ	ՀՀ վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության տրանսպորտային բաժին	Երևան	ք. Երևան	Բաղրամյան 26/2	40	Mb/s
39.	ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայություն	Երևան	ք. Երևան	Գ. Նժդեհ 23/1	100	Mb/s
40.	ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ		Երևան	ք. Երևան	Դավթաշեն 4-րդ թաղամաս, Միկոյան 109/8	100	Mb/s
41.	ՀՀ ԱՆՎԱՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՐԱՄԵՆՅԱԿ		Երևան	ք. Երևան	Մարշալ Բաղրամյան 24	100	Mb/s
42.	ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	ԱՍՀՆ Սոցիալական ապահովության պետական ծառայություն	Երևան	ք. Երևան	Նալբանդյան 13	200	Mb/s

Ցանկ 2

Հ/Հ	Պետական մարմին	Ստորաբաժանում	Մարզ	Բնակավայր	Հասցե	Տվյալների հաղորդման թողունակություն	Չ/ձ
43.	ՀՀ Ներքին գործերի նախարարության ծառայություն	ՀՀ ոստիկանություն	Երևան	ք. Երևան	Նալբանդյան 130	200	Mb/s
44.	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ		Երևան	ք. Երևան	Խորենացի 3, Խորենացի 7 (Խորենացի 3,7)	20	Mb/s
45.	ՀՀ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ		Երևան	ք. Երևան	Արշակունյաց պող. 7	100	Mb/s
46.	ՀՀ Պետական գույքի կառավարման կոմիտե		Երևան	ք. Երևան	Տիգրան Մեծի 4	100	Mb/s
47.	ՀՀ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ		Երևան	ք. Երևան	Տիգրան Մեծի 4	100	Mb/s
48.	ՀՀ Պետական գույքի կառավարման կոմիտե	«Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ	Երևան	ք. Երևան	Զաքյան 10	20	Mb/s
49.	ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն	Երևան	ք. Երևան	«Զվարթնոց» օդանավակայան	100	Mb/s
50.	ՀՀ ՄՆՆԴԱՐԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ ՄԱՐԿԻՆ	Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին	Երևան	ք. Երևան	Կոմիտաս 49/2	200	Mb/s
51.	ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ		Երևան	ք. Երևան	Բաղդասյան 19	20	Mb/s
52.	ՀՀ ՀԱԾՎԵՔՆԵՐԻ ԴԱՐԱՆ		Երևան	ք. Երևան	Վարդանանց 8, 3-րդ հարկ	100	Mb/s
53.	ՀՀ ԴԱՏԱՆԱԶՈՒԹՅՈՒՆ		Երևան	ք. Երևան	Վ. Սարգսյան 5	200	Mb/s
54.	ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ		Երևան	ք. Երևան	Վ. Սարգսյան 6	100	Mb/s

55.	ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Զրային կոմիտե	Երևան	ք. Երևան	Վարդանանց 13ա	100	Mb/s
56.	ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Միգրացիոն պետական ծառայություն	Երևան	ք. Երևան	Ուլենցի 31	100	Mb/s
57.	ՀՀ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ		Երևան	ք. Երևան	Կոմիտաս 49/2	50	Mb/s
58.	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ		Երևան	ք. Երևան	Մաշտոցի 47	100	Mb/s
59.	ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ	Ազգային փոքրամասնություն ների և կրոնի խարցերի բաժին	Երևան	ք. Երևան	Հանրապետության փողոց 73	100	Mb/s
60.	ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ	Կարգավորման ազդեցության գնահատման վարչություն և Մարդասիրական օգնությունների բաժին	Երևան	ք. Երևան	Արուսյան 9	100	Mb/s
61.	ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՐՈՎ		Երևան	ք. Երևան	Մյասնիկյան պողոտա 5/1 (Սարյան 22-ից է տեղափոխվել)	100	Mb/s
62.	Հանրային խորհրդի քարտուղարություն		Երևան	ք. Երևան	Նալբանդյան 28	100	Mb/s
63.	ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ	Քաղաքացիական ծառայության խորհուրդ	Երևան	ք. Երևան	Տեղյան 89	100	Mb/s

64.	ՀՀ ՄՐՅԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ		Երևան	ք.Երևան	Տիգրան Մեծի 4	100	Mb/s
65.	ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Ազգային պատկերասրահ	Երևան	ք.Երևան	Արամի 1	50	Mb/s
66.	ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Պետական ռեգիստրի գործակալություն	Երևան	ք.Երևան	Կոմիտաս 49/3	100	Mb/s
67.	ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Առողջապահության նախարարության պետական առողջապահական գործակալություն, Պետական հիգիենիկ և հակահամաճարակ ային հսկողության տեսչություն	Երևան	ք.Երևան	Նորք Մարաշ, Գ. Հովսեփյանի 10	20	Mb/s
68.	ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	ՏՀՆՆ Հավատարմագրման ն ազգային մարմին	Երևան	ք.Երևան	Մ. Մկրտչյան 5	20	Mb/s
69.	ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	ԱՆ քրեակատարողական ն ծառայություն	Երևան	ք.Երևան	Արշակունյաց 63	50	Mb/s
70.	ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	ՀՀ ԱՆ Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն - ԴԱՀԿ	Երևան	ք.Երևան	Հալաբյան 41ա	20	Mb/s
71.	ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	ՀՀ ԱՆ Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն	Երևան	ք.Երևան	Կոմիտաս 54բ	20	Mb/s

72.	ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ՀՀ բնապահպանությա ն և ընդերքի տեսչական մարմին (կենտրոնական լաբորատորիա)	Երևան	ք.Երևան	Այգեձոր 1-ին նրբ. 22 շենք	20	Mb/s
73.	ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ		Երևան	ք.Երևան	Կոլյունի 15	100	Mb/s
74.	ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Ջրային կոմիտե	Երևան	ք.Երևան	ք. Երևան, Չարենց 46	100	Mb/s
75.	ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Հիդրոէներգետիկ անության և մոնիթորինգի կենտրոն ԴՈՒԿ «Շրջակա միջավայրի և տեղեկատվության» ԴՈՒԿ	Երևան	ք.Երևան	ք. Երևան, Կոմիտասի 29	100	Mb/s
76.	ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Միասնական սոցիալական ծառայություն	Երևան	ք.Երևան	Մամիկոնյանց 39ա	50	Mb/s
77.	ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	ՀՀ ԿԳՄՍՆ «ՀՀ բարձրագույն դրակավորման հանձնաժողով» գործակալություն և լեզվի պետական տեսչություն	Երևան	ք.Երևան	Կիկյան 16	25	Mb/s
78.	ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ		Երևան	ք.Երևան	Կոմիտաս 37/4	20	Mb/s

79.	ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե	Երևան	ք. Երևան	Հ. Օրբելի եղբայրների 22	20	Mb/s
80.	ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	ՀՀ ՖՆ կառուցվածքային ստորաբաժանումներ	Երևան	ք. Երևան	Կոմիտաս 54 բ	100	Mb/s
81.	ՀՀ ԿՐՈՂՈՒԹՅԱՅԻ ԿԱՆԽԱԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ		Երևան	ք. Երևան	Կողբուն 15-17-19	50	Mb/s
82.	ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Միասնական սոցիալական ծառայություն	Երևան	ք. Երևան	Գյուլբենկյան 29	30	Mb/s
83.	ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Միասնական սոցիալական ծառայություն	Երևան	ք. Երևան	Դավթաշեն 3-րդ թաղամաս, վարչ. շենք. 23/1	100	Mb/s
84.	ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Միասնական սոցիալական ծառայություն	Երևան	ք. Երևան	Խոտյակով 12, 222 պոլիկլինիկայի 2- (նոր հասցե) Մարշալ Բաբաջանյան փող. 3 շենք 80)	50	Mb/s
85.	ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Միասնական սոցիալական ծառայություն	Երևան	ք. Երևան	Ագաթանգեղոսի փ. 2	50	Mb/s
86.	ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Միասնական սոցիալական ծառայություն	Երևան	ք. Երևան	Բատիկյան 99	100	Mb/s
87.	ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Միասնական սոցիալական ծառայություն	Երևան	ք. Երևան	Մանանդյան 2/1	70	Mb/s
88.	ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Միասնական սոցիալական ծառայություն	Երևան	ք. Երևան	Բաշինջաղյան փողոց 100 (N94 դպրոց)	50	Mb/s

89.	ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Միասնական սոցիալական ծառայություն	Երևան	ք. Երևան	Ա. Արմենակյան 129	100	Mb/s
90.	ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	ՔԿԱԳ ՀՀ ԱՆ կառուցվածքային ստորաբաժանում	Երևան	ք. Երևան	Դավիթաշեն 2-րդ թաղամաս 16/3	20	Mb/s
91.	ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	ՔԿԱԳ աշխատանքների և մեթոդոլոգիայի բաժին գործակալության ՔԿԱԳ աշխատանքների և մեթոդոլոգիայի բաժին	Երևան	ք. Երևան	Զաքյան 3	20	Mb/s
92.	ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	ՔԿԱԳ Հատուկ սպասարկում	Երևան	ք. Երևան	Այվազովսկու 14/4 (Հալաբյան 31/2)	20	Mb/s
93.	ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	ՔԿԱԳ Արաբկրի ՍԱՏԲ	Երևան	ք. Երևան	Կոմիտաս 56	20	Mb/s
94.	ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	ՔԿԱԳ Քանաքեռ-Զեյթուն	Երևան	ք. Երևան	Դավիթ Անհաղթ 11	20	Mb/s
95.	ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	ՔԿԱԳ Կենտրոն և Նորք-Մարաշ	Երևան	ք. Երևան	Սարյան 24	20	Mb/s
96.	ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	ՔԿԱԳ Աջափնյակ և Դավթաշեն	Երևան	ք. Երևան	Լենինգրադյան 38	20	Mb/s
97.	ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	ՔԿԱԳ Էրեբունի և Նուբարաշեն	Երևան	ք. Երևան	Խորենացի 163ա	20	Mb/s
98.	ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	ՔԿԱԳ Շենգավիթ	Երևան	ք. Երևան	Եղբայրության 9	20	Mb/s
99.	ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	ՔԿԱԳ Մալաթիա-Սեբաստիա	Երևան	ք. Երևան	Սեբաստիայի 18	20	Mb/s
100.	ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	ՔԿԱԳ Նոր-Նորք	Երևան	ք. Երևան	Գայի 19	20	Mb/s

101.	ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	ՔԿԱԳ Ավան-Նոր- Նորք	Երևան	ք. Երևան	Ավան, Խուդյակով 222	30	Mb/s
102.	ՀՀ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ	Մարզերի միավորված ստորաբաժանում	Երևան	ք. Երևան	Փ. Բուզանդի 1/3	100	Mb/s
103.	ՀՀ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ	ԿԱԴԱՍՏՐ Կենտրոն	Երևան	ք. Երևան	Արզիշտիի փողոց, 11 շենք, 109 շինություն	50	Mb/s
104.	ՀՀ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ	ԿԱԴԱՍՏՐ Շենգավիթ	Երևան	ք. Երևան	Մանանդյան 33	50	Mb/s
105.	ՀՀ ՔԱՂԱՔԱՇԽՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ՔՏՀԱՍՏ Կենտրոն	Երևան	ք. Երևան	Նալբանդյան 28	60	Mb/s
106.	ՀՀ ՔԱՂԱՔԱՇԽՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ՔՏՀԱՍՏ	Երևան	ք. Երևան	Կառավարական տուն N 3	20	Mb/s
107.	ՀՀ ՔԱՂԱՔԱՇԽՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ՔՏՀԱՍՏ	Երևան	ք. Երևան	Ռոստոմի փող. 30 շին. 243 (Սարյան 22-ից է տեղափոխվել)	100	Mb/s
108.	ՀՀ ԱՐԴՈՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԱԱՍՏ Կենտրոն	Երևան	ք. Երևան	Սայաթ-Նովա 2	20	Mb/s
109.	ՀՀ ՄՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին	Երևան	ք. Երևան	Ծովակալ Խակովի 9	20	Mb/s
110.	ՀՀ ՄՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին	Երևան	ք. Երևան	«Զվարթնոց» օդանավակայան	50	Mb/s

Ցանկ 3

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 3/3, հեռ.՝ (37410) 590021, էլ. փոստ՝ info@hti.am

Մարզային պետական մարմիններ

Հ/Հ	Պետական մարմին	Ստորաբաժանում	Մարզ	Բնակավայր	Հասցե	Տվյալների հաղորդման թողունակություն	Չ/մ
111.	ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Մարզպետարաններ	Արագածոտն	ք.Աշտարակ	Վարդգես Դեմիրյան 4 (Հանրապետության և 4)	100	Mb/s
112.	ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Մարզպետարաններ	Արարատ	ք.Արտաշատ	Օգոստոսի 23, 60 շենք	100	Mb/s
113.	ՀՀ ԲՆԱԴԱՐԱՆԱԿԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Բնապահպանություն և ընդերք	Արարատ	ք.Արտաշատ	Օգոստոսի 23 փ., 60 շենք	20	Mb/s
114.	ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Մարզպետարաններ	Արմավիր	ք.Արմավիր	Աբովյան 71	100	Mb/s
115.	ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Մարզպետարաններ	Գեղարքունիք	ք.Գավառ	Գր. Լուսավորչի 36	100	Mb/s
116.	ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Մարզպետարաններ	Լոռի	ք.Վանաձոր	Հայքի հրապարակ 1	100	Mb/s
117.	ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Մարզպետարաններ + Ռեգիստր	Կոտայք	ք.Հրազդան	Կենտրոն թաղ, Սահմանադրության և հրապարակ, վարչական շենք	100	Mb/s
118.	ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Մարզպետարաններ	Շիրակ	ք.Գյումրի	Գ. Նժդեհի 16	100	Mb/s

119.	ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Մարզպետարաններ	Սյունիք	ք. Կապան	Գ. Նժդեհի 1	100	Mb/s
120.	ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍԶԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ՔՏՀԱՏՄ	Սյունիք	ք. Կապան	Գ. Նժդեհի 1	20	Mb/s
121.	ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Մարզպետարաններ	Վայոց ձոր	ք. Եղեգնաձոր	Շահումյան 5	100	Mb/s
122.	ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Մարզպետարաններ	Տավուշ	ք. Իջևան	Սահմանադրության ն Հրապարակ 1	100	Mb/s
123.	ՀՀ ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍԶԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ՍԱՏԳ Իջևանի տ/ս	Տավուշ	ք. Իջևան	Սահմանադրության ն Հրապարակ 1	30	Mb/s
124.	ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍԶԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ՔՏՀԱՏՄ	Տավուշ	ք. Իջևան	Սահմանադրության ն Հրապարակ 1	20	Mb/s

Ցանկ 4

Հ/Հ	Պետական մարմին	Ստորաբաժանում	Մարզ	Բնակավայր	Հասցե	Տվյալների հաղորդման թողունակությ ուն	Զ/ճ
-----	----------------	---------------	------	-----------	-------	---	-----

ԱՍՀՆ մարզային ստորաբաժանումներ								
	ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Միասնական սոցիալական ծառայություն	Արագածոտն	ք. Աշտարակ	Վ. Պետրոսյան 69/1	30	Mb/s	
125.	ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ <td>Միասնական սոցիալական ծառայություն</td> <td>Արագածոտն</td> <td>ք. Թալին</td> <td>Գալի 1 (քաղաքապետարանի շենք)</td> <td>30</td> <td>Mb/s</td>	Միասնական սոցիալական ծառայություն	Արագածոտն	ք. Թալին	Գալի 1 (քաղաքապետարանի շենք)	30	Mb/s	
126.	ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ <td>Միասնական սոցիալական ծառայություն</td> <td>Արարատ</td> <td>ք. Արտաշատ</td> <td>Իսակովի 47</td> <td>30</td> <td>Mb/s</td>	Միասնական սոցիալական ծառայություն	Արարատ	ք. Արտաշատ	Իսակովի 47	30	Mb/s	
127.	ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ <td>Միասնական սոցիալական ծառայություն</td> <td>Արարատ</td> <td>ք. Վեդի</td> <td>Արարատյան 55, 1-ին հարկ</td> <td>30</td> <td>Mb/s</td>	Միասնական սոցիալական ծառայություն	Արարատ	ք. Վեդի	Արարատյան 55, 1-ին հարկ	30	Mb/s	
